ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ջարուհի Փոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-629-06.10.2014-ՊԻ-010/0*) վերաբերյալ:

Ներկայացված օրենքի նախագծին կից հիմնավորման համաձայն փոփոխություն կատարելու նպատակը հանրային ծառայության պաշտոններում՝ քաղաքական, հայեցողական և քաղաքացիական, դատվածություն ունեցող քաղաքացիների նշանակման բացառումն է: Այդ նպատակով օրենքի նախագծով առաջարկվում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց արդյունքում իրավունք է տրվում քաղաքական պաշտոն զբաղեցնելու միայն այն քաղաքացիներին, ովքեր չունեն դատվածություն, հայեցողական

պաշտոն՝ այն քաղաքացիներին, ովքեր ունեն բարձրագույն կրթություն և չունեն դատվածություն, քաղաքացիական պաշտոն՝ այն քաղաքացիներին, ովքեր չունեն դատվածություն:

Կարծում ենք, որ սահմանափակումներ կիրառելիս պետք է հաշվի առնել պաշտոնների տեսակները և առանձնահատկությունները՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր պաշտոնի բնույթը, լիազորությունների շրջանակը, մասնավորապես, որոշումներ կայացնելու, շփումների և այդ պաշտոններին բնորոշ այլ հարցերի մասով: Հարկ է նկատի ունենալ նաև, որ դատվածություն ունենալը չի ենթադրում, որ տվյալ անձը պատժվել է «ազատազրկումը որոշակի ժամկետով» պատժատեսակով:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է. «Դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: Սույն նորմն արգելանք չէ օրենքով սահմանափակումներ նախատեսելու՝ դատավորի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի, ոստիկանության ծառայողի, քրեակատարողական ծառայողի, ազգային անվտանգության մարմիններում ծառայողի պաշտոններ զբաղեցնելու համար:»:

Ինչպես երևում է նշված հոդվածի դրույթներից, օրենքով դատվածության հետ կապված այլ սահմանափակումներ կարող են նախատեսվել նշված կատեգորիայի անձանց համար՝ ելնելով նրանց աշխատանքի առանձնահատկություններից: Մասնավորապես, համաձայն Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 119-րդ հոդվածի, դատավոր չի կարող նշանակվել այն անձը, որը դատապարտվել է հանցագործության կատարման համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից:

Ներկայացված նախագծի ընդունման դեպքում կիմաստազրկվի դատվածությունը հանելու կամ մարելու նորմը:

Ներկայացված նախագծում օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն՝ նախագծի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածներն անհրաժեշտ է միավորել մեկ հոդվածի ներքո, քանի որ նշված հոդվածներով նախատեսվող փոփոխությունները և լրացումը վերաբերում են օրենքի միևնույն հոդվածին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն,**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) հայեցողական պաշտոններ կարող են զբաղեցնել միայն Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք ունեն բարձրագույն կրթություն և չունեն դատվածություն:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով առաջարկվում է *ամրագրել դրույթներ՝ հանրային ծառայության պաշտոններում դատվածություն ունեցող քաղաքացիների նշանակումը բացառելու վերաբերյալ* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Ներկայացված օրենքի նախագիծը ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-629-06.10.2014-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 4-րդ մասում հանել վերջակետը:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել նոր բառերով. «եւ չունեն դատվածություն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված հանցագործությունների կատարման համար:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածը լրացնել նոր 6.1-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ. «Հայեցողական պաշտոններ կարող են զբաղեցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք ունեն բարձրագույն կրթություն եւ չունեն դատվածություն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված հանցագործությունների կատարման համար:»:

Հոդված 4. Օրենքի 4-րդ հոդվածի 11-րդ մասում «որոնք ունեն բարձրագույն կրթություն,» բառերից հետո հանել ստորակետը:

Հոդված 5. Օրենքի 4-րդ հոդվածի 11-րդ մասը «որոնք ունեն բարձրագույն կրթություն» բառերից հետո լրացնել նոր բառերով. «եւ չունեն դատվածություն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված հանցագործությունների կատարման համար,»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

Վերոնշյալ փոփոխության նպատակն է բացառել հանրային ծառայության պաշտոններում՝ քաղաքական եւ հայեցողական, դատվածություն ունեցող քաղաքացիների նշանակումը: Պետական պաշտոն զբաղեցնող յուրաքանչյուր ոք պետք է իր գիտելիքներով, վարքով բարձր պահի տվյալ պետական կառույցի պատիվն ու հեղինակությունը՝ այդպիսով նպաստելով այդ

կառույցի նկատմամբ հանրային վստահության մակարդակի աճին: Մյուս կողմից գաղտնիք չէ, որ անձը, որն իր կյանքի որոշակի ժամանակահատված անցկացնում է անազատության մեջ իր կատարած հանցանքի դիմաց, կալանավայրում ձեռք է բերում որոշակի նորմեր եւ վարքի ձեւեր, որոնք ընդունելի չեն հասարակական հարաբերությունների տեսանկյունից: Եվ որպեսզի Հայաստանի Հանրապետության պետական մարմինները ունենան հեղինակության եւ հանրային վստահության բարձր մակարդակ հարկ է, որ այդ մարմինները ներկայացնող թե՛ բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող, թե՛ բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող անձինք ունենան բարձրագույն կրթություն եւ չունենան դատվածություն: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ներկայացված օրենքի նախագծով առաջարկվում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1. 4-րդ հոդվածի 4-րդ մասը, որը վերաբերում է քաղաքական պաշտոններ զբաղեցնելու իրավունք ունեցող քաղաքացիներին ներկայացվող պահանջին, լրացնել եւս մեկ պահանջով, այն է՝ դատվածություն չունենալու պահանջով: Այսինքն՝ առաջարկվում է քաղաքական պաշտոն զբաղեցնելու իրավունք տալ միայն այն քաղաքացիներին, ովքեր չունեն դատվածություն:

2. 4-րդ հոդվածը լրացնել նոր 6.1-րդ մասով, ըստ որի՝ հայեցողական պաշտոններ կարող են զբաղեցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք ունեն բարձրագույն կրթություն եւ չունեն դատվածություն:

4-րդ հոդվածի 11-րդ մասը, որը վերաբերում է քաղաքացիական պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեցող քաղաքացիներին ներկայացվող պահանջին, լրացնել եւս մեկ պահանջով: Այսինքն՝ առաջարկվում է քաղաքացիական պաշտոն զբաղեցնելու իրավունք տալ միայն այն քաղաքացիներին, ովքեր չունեն դատվածություն: